ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

29 ապրիլի չորեքշաբթի 2026
տպագրության ԺԵ տարի

53
(3262)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԻՆՉ Է ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԵԼ ԱՐԱՄ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ

Երեկ «Ուժեղ Հայաստան» կուսակցության ներկայացուցիչ Արթուր Ավանեսյանին՝ Կանդազին, երկամսյա կալանքի է տարել Հակակոռուպցիոն դատարանի՝ կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ վարույթներով մասնագիտացված դատավոր Արամ Գրիգորյանը:

Նշենք, որ Գրիգորյանը հայտնի է մի շարք աղմկահարույց քրեական գործերով: Նրա վարույթում են մի շարք նախկին պաշտոնյաների եւ նրանց հարազատների գործեր, մասնավորապես նախկին նախագահ Սերժ Սարգսյանի, նախկին վարչապետ Հովիկ Աբրահամյանի, ինչպես նաեւ պաշտպանության նախկին նախարար Սեյրան Օհանյանի կնոջ՝ Ռուզաննա Խաչատրյանի հետ կապված վարույթները:

«Ժողովուրդ» օրաթերթը ուսումնասիրել է դատավոր Արամ Գրիգորյանի հրապարակային հայտարարագրային տվյալները՝ հասկանալու համար, թե ինչ ունեցվածք ունի նա, եւ ինչպես է այն ձեւավորվել պետական համակարգում աշխատելու տարիների ընթացքում:

Դատավորը երկար տարիներ աշխատել է դատախազական եւ քննչական համակարգերում, իսկ ներկայում զբաղեցնում է Հակակոռուպցիոն դատարանի դատավորի պաշտոնը՝ մասնագիտացած լինելով կոռուպցիոն հանցագործությունների քննության ոլորտում:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում

«Ժողովուրդ» օրաթերթի նախորդ համարում գրել էինք, որ ՀՀ կառավարությունը միլիարդներ է ներդրել սահմանամերձ բնակավայրերում տուն կառուցելու համար, բայց չի հաշվարկել՝ այդ տներում մարդիկ ապրում են, թե ոչ: «Ժողովուրդ» օրաթերթը հարցում էր ուղղել կառավարությանը՝ պահանջելով հստակ տվյալներ՝ քանի մարդ է դիմել, քանիսն են դարձել շահառու, որքան գումար է հատկացվել, որ մարզերում եւ որ բնակավայրերում են կառուցվել տներ, եւ այդ տներից քանիսն են բնակեցված: ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունը պատասխանել է, որ աջակցության ծրագրի մեկնարկից ի վեր ընդգրկվել է 2319 շահառու: Նույն պատասխանում նշվում է, որ «ծրագրի 2319 շահառուներից 2272-ն արդեն վարկավորվել են (առնվազն 1 փուլ), որոնց, ընդհանուր առմամբ, գործընկեր ֆինանսական կազմակերպությունների կողմից տրամադրվել է շուրջ 35 մլրդ դրամ կառուցապատման վարկ, որի գծով ամսական մարումներին ծրագրի մեկնարկից մինչ օրս ՀՀ պետական բյուջեից հատկացվել է շուրջ 6.8 մլրդ դրամ»: Այսինքն, պաշտոնական տվյալներով, ծրագիրն արդեն անցել է խոշոր ֆինանսական շրջանառության փուլ. բանկային համակարգով տրամադրվել է շուրջ 35 միլիարդ դրամ կառուցապատման վարկ, իսկ պետական բյուջեից միայն ամսական մարումների ուղղությամբ արդեն հատկացվել է մոտ 6 միլիարդ 800 միլիոն դրամ:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում

ArmLur.am-ը փորձել է հասկանալ, թե իրականում ով է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության 2026 թվականի խորհրդարանական ընտրությունների համամասնական ցուցակի 72-րդ համարը՝ Ռուզաննա Երեմյանը: Պաշտոնապես նա ղեկավարում է «Հակոբ Կոջոյան» կրթահամալիրը: Սակայն նրա գործունեությունը, դատելով հրապարակային վարքագծից, վաղուց դուրս է եկել կրթության շրջանակներից եւ ակնհայտորեն տեղափոխվել քաղաքական դաշտ: Երեմյանը վերջին տարիներին սոցիալական ցանցերում աչքի է ընկել ոչ թե կրթական նախաձեռնություններով, այլ բացահայտ քաղաքական ակտիվությամբ: Նրա գրառումները հիմնականում ուղղված են եղել գործող իշխանությունների պաշտպանությանը եւ ընդդիմության կոշտ քննադատությանը: Օրինակ՝ Գյումրիի ՏԻՄ ընտրություններից հետո նա հրապարակայնորեն հայտարարել էր, թե գյումրեցիները «սխալ ընտրություն են կատարել»՝ փաստացի կասկածի տակ դնելով ընտրողների որոշումը: Ավելին, նա թիրախավորել էր նաեւ Վարդան Ղուկասյանին՝ ներկայացնելով նրան որպես Հայաստանի ինքնիշխանությանը սպառնացող գործիչ:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

ՀՀ արդարադատության նախկին փոխնախարար, ներկայումս ԲԴԽ անդամ Երանուհի Թումանյանցը դատի է տվել Երեւանի քաղաքապետին: ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ Իրինա Աշոտի Մարտիրոսյանի, Երանուհի Ստեփանի Թումանյանցի եւ Անահիտ Շիրինյանի ներկայացուցիչը ապրիլի 8-ին հայցադիմում է ներկայացրել դատարան ընդդեմ Երեւանի քաղաքապետի՝ Երեւանի քաղաքապետի 24.02.2026 թվականի թիվ ՇԹ/6/22658-26 շինարարության թույլտվությունն անվավեր ճանաչելու պահանջի մասին: Հայցվորը ներկայացված միջնորդությամբ հայտնել է, որ տվյալ դեպքում առկա է վտանգ, որ կարող է փոփոխության ենթարկվել ընդհանուր բաժնային սեփականության գույքը, քանի որ ներկայումս իրականացվում են ակտիվ շինարարական աշխատանքներ, այդ թվում՝ իրականացվում են շինարարական միջամտություններ շենքի ամբողջ նկուղային հատվածում, ուստի կարող են իրականացվել կառուցվածքային փոփոխություններ, որոնց հետագա վերականգնումը կարող է լինել տեխնիկապես դժվար կամ անհնարին:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

ՊԵՏՔ Է ՎԵՐԱԴԱՌՆԱՆՔ ՄԵՐ ԱՐԺԵՔՆԵՐԻՆ

Ապրիլի 24-ին՝ Հայոց ցեղասպանության հիշատակի օրը, Armlur.am-ը զրուցեց Սեւանավանքի վանահայր տեր Մինաս քահանա Մարտիրոսյանի հետ:

- Տե՛ր հայր, այսօր Ձեր ուսանողների հետ այցելել եք Ծիծեռնակաբերդ՝ խնկարկելու եւ հիշելու Հայոց ցեղասպանության անմեղ զոհերի հիշատակը: Ի՞նչ խորհուրդ ունի Ձեզ համար այս օրը՝ 111 տարի անց:

- Այս օրը մեզ համար մեծ ցավի, մեծ կորստի եւ միեւնույն ժամանակ խորը խորհելու առիթ է: Դա Աստծո կողմից մեր ազգին տրված փորձություն է, որը պետք է ոչ միայն հիշենք, այլ նաեւ փորձենք հասկանալ՝ ինչու տեղի ունեցավ եւ ինչ դասեր պետք է քաղենք: Ցավոք, դեռ ամբողջությամբ չենք հասել այդ գիտակցությանը: «Խելքի գալը» նշանակում է իսկապես հասկանալ մեր պատմությունը, մեր սխալները եւ մեր ներկայիս վիճակը: Սա յուրաքանչյուր անհատի, յուրաքանչյուր ընտանիքի եւ ամբողջ ազգի խնդիրն է:

- Ի՞նչ դասեր ենք քաղել պատմությունից:

- Դժվար է խոսել բոլորի անունից, բայց կարելի է ասել, որ այն հատվածը, որն իսկապես գիտակցում է, փորձում է պահպանել եւ զարգացնել այն շնորհը, որ Աստված տվել է մեր ազգին: Սակայն այսօր տեսնում ենք մտածողության որոշակի նահանջ: Ընտանիքները հաճախ չեն փոխանցում անհրաժեշտ արժեքները, դպրոցներն ու հասարակական կառույցներն էլ միշտ չէ, որ կատարում են իրենց դերը: Մինչդեռ հենց դրանք պետք է ձեւավորեն սերունդների գիտակցությունը, օգնեն հիշել եւ ճիշտ դասեր քաղել անցյալից:

- Այս օրերին նաեւ Արցախում տեղի ունեցող գործընթացները հաճախ բնութագրվում են որպես «սպիտակ ցեղասպանություն»: Ձեր կարծիքով՝ Ադրբեջանի այս քաղաքականությունը սպասելի՞ էր:

- Այո՛, ցավոք, դա սպասելի էր: Չէր կարելի ակնկալել, որ նրանք կպահպանեն մեր մշակութային ժառանգությունը կամ հոգատար վերաբերմունք կցուցաբերեն: Մենք տեսնում ենք, որ տարիների ընթացքում թշնամանքն ու ատելությունը չեն նվազել: Սա ցավալի իրականություն է:

- Ձեր կարծիքով՝ հնարավո՞ր էր կանխել այս ամենը:

- Կանխումը սկսվում է մեզանից՝ մեր ներսից: Մենք պետք է ունենանք ուժեղ հոգեւոր եւ ազգային ինքնագիտակցություն: Եթե մենք ինքներս թուլացած ենք՝ հոգեւոր, բարոյական առումով, դժվար է դիմակայել արտաքին վտանգներին: Մեր ընտրությունն է՝ ինչպիսին ենք ուզում լինել որպես ազգ, ինչ ապագա ենք պատկերացնում:

- Ի՞նչ պետք է անենք այսօր՝ որպես հասարակություն:

- Պետք է վերադառնանք մեր արժեքներին՝ հավատքին, ինքնագիտակցությանը, ազգային միասնականությանը: Եկեղեցին տալիս է կյանքի իմաստի եւ նպատակի պատասխանները, բայց այսօր մարդիկ հաճախ ավելի շատ զբաղված են նյութական հարցերով՝ հարմարավետությամբ, հարստությամբ: Սա մեզ հեռացնում է հիմնականից: Միեւնույն ժամանակ, պետք է նաեւ աղոթենք ոչ միայն մեզ համար, այլ նաեւ մեր թշնամիների: Նրանք նույնպես Աստծո ստեղծագործությունն են, պարզապես շատ աղճատված վիճակում: Աստծո համար ամեն ինչ հնարավոր է, եւ փոփոխությունը հնարավոր է նաեւ նրանց համար:

- Ձեր ուղերձը հայ հասարակությանը այս օրերին:

- Եթե մենք ինքներս չուղղվենք, չենք կարող ակնկալել դրական փոփոխություններ: Պետք է ամրապնդենք մեր հավատքը, պահպանենք ազգային ինքնությունը եւ գիտակցաբար կառուցենք մեր ապագան: Միայն այդ դեպքում կարող ենք հաղթահարել փորձությունները եւ առաջ շարժվել որպես ուժեղ ու արժանապատիվ ազգ:

Զրուցեց՝ ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆԸ

ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ՏԵՂՈՒՄ ՍԱԼԱՀԱՏԱԿՆ Է

Երկու «ադօրինի կառույցների» քանդումը չի կարող դիտարկվել որպես կրոնական կամ մշակութային ժառանգության ոչնչացում, հայտարարում են Բաքվից՝ հաստատելով, որ Ստեփանակերտի մայր տաճարն ու Սուրբ Հակոբ եկեղեցին այլեւս չկան: «Ազատության» Պրահայի գրասենյակում արբանյակային թարմ լուսանկարներն են վերլուծել՝ հստակ երեւում է՝ հսկա մայր տաճարի տեղում սպիտակ սալահատակն է, Սուրբ Հակոբի տեղում՝ սեւ հող:

Կովկասի մահմեդականների վարչությունն է պատասխանել Մայր Աթոռի՝ օրեր առաջ տարածած հաղորդագրությանը, որում խստորեն դատապարտում են Ադրբեջանի իշխանությունների կողմից իրականացվող Արցախի հոգեւոր եւ մշակութային ժառանգության հետեւողական ոչնչացումը: Բաքուն հայտարարում է, որ այս երկու եկեղեցիները «օկուպացիայի խորհրդանիշներ էին»:

«Հայրենի տարածքներ վերադարձող նախկին հարկադիր տեղահանվածները բազմիցս դիմել են պետական մարմիններին, դատական ատյաններին՝ օկուպացիայի ընթացքում կառուցված շինությունների ապամոնտաժման պահանջով», - ասված է հաղորդագրության մեջ:

Այդ ովքե՞ր են վերադառնում. Ստեփանակերտում շատ քիչ էին ադրբեջանցիները եւ ապրում էին Կրկժանի վերին թաղում եւ ոչ եկեղեցու թաղերում, հակադարձում է Արցախի թեմական խորհրդի ատենապետ Լեռնիկ Հովհաննիսյանը:

«Կոնկրետ Ստեփանակերտում միշտ էլ հայ բնակչությունը ոչ թե մեծամասնություն է կազմել, այլ եղել է գերակշռող, այսինքն՝ Ստեփանակերտը միշտ եղել է մեծամասամբ հայաբնակ քաղաք: Ադրբեջանցիներն ապրել են որոշակիորեն Կրկժանի վերին թաղում, եղել են տարբեր շրջաններից բերված 1960-ականներին, որպեսզի փոխեն ԼՂԻՄ ժողովրդագրական իրավիճակը: Այնպես որ, կովկասցի մահմեդականների միության հայտարարությունն իրականության հետ որեւէ աղերս չունի», - «Ազատության» հետ զրույցում ասել է նա:

ՍԱՏՄ-Ն՝ «ՋԵՐՄՈՒԿ»-Ի ԱՐԳԵԼԱՓԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն ռուսական եւ հայկական մամուլում տարածված տեղեկությունների՝ ռուսական պետական «Անկեղծ նշան» (Честный знак) մակնշման համակարգն արգելափակել է «Ջերմուկ Գրուպ» ՓԲԸ արտադրության «Ջերմուկ» ապրանքանիշի՝ 2026 թվականի փետրվարի 17-ին եւ մարտի 5-ին արտադրված խմբաքանակների իրացումը: Ըստ հրապարակումների՝ կասեցման հիմքը Ռուսաստանի Դաշնության սպառողների իրավունքների պաշտպանության եւ մարդու բարեկեցության վերահսկման դաշնային ծառայության՝ «Ռոսպոտրեբնադզոր»-ի գրությունն է «պարտադիր չափորոշիչների խախտումների» մասին:

ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմինը ՌԴ համապատասխան պատկան մարմիններից՝ «Ռոսպոտրեբնադզոր»-ից կամ «Ռոսսելխոզնադզորից» (ՌԴ անասնաբուժական եւ բուսասանիտարական վերահսկողության դաշնային ծառայություն), պաշտոնական որեւէ տեղեկություն՝ գրություն, խնդրո առարկայի վերաբերյալ առայժմ չի ստացել:

Ձեռնարկվում են միջոցներ իրավիճակը պարզաբանելու եւ համապատասխան քայլեր ձեռնարկելու ուղղությամբ: Արդյունքները կհրապարակվեն:

ՀՐԱՊԱՐԱԿՎԵԼ ԵՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՑՈՒՑԱԿՆԵՐԸ

ԱԺ հերթական ընտրությունների ընտրողների նախնական ցուցակները՝ ըստ ընտրական տեղամասերի, ՀՀ Ընտրական օրենսգրքով նախատեսված ժամկետում՝ քվեարկության օրվանից 40 օր առաջ, հրապարակված են. ընտրելու իրավունք ունեցող անձինք կարող են որոնել իրենց տվյալները:

Ներքին գործերի նախարարության elections.mia.gov.am հարթակում արդեն հրապարակված են 2026 թվականի հունիսի 7-ին կայանալիք Ազգային Ժողովի հերթական ընտրություններին մասնակցող ընտրողների նախնական ցուցակները՝ որոնման եւ ներբեռնման հնարավորությամբ:

Որոնման համակարգում ընտրողը կարող է մուտքագրել իր անունը եւ ազգանունը՝ գտնելու համար այն ընտրական տեղամասը, որտեղ պետք է կատարի քվեարկությունը: Ավելի ճշգրիտ արդյունք ստանալու համար հնարավոր է լրացնել նաեւ ծննդյան օրը, ամիսը եւ տարեթիվը:

Հարթակում, ներբեռնման հնարավորությամբ, հասանելի են նաեւ ընտրողների նախնական ցուցակները՝ ըստ համայնքների եւ տեղամասերի:

Ընտրելու իրավունք ունեցող անձինք կարող են որոնել իրենց տվյալները՝ մուտք գործելով elections.mia.gov.am կայքի «ԱԺ ընտրություններ» բաժին կամ ներբեռնել ցուցակները՝ անցնելով «Ըստ տեղամասերի» բաժինը:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՀԱՅԱՍՏԱՆ ԿԳԱ



Հաջորդ շաբաթ եվրոպացի առաջնորդների հետ Հայաստան կգա նաեւ Կանադայի վարչապետը՝ Եվրոպական քաղաքական համայնքի գագաթնաժողովին մասնակցելու, տեղեկանում ենք Եվրահանձնաժողովի կայքից: Մարկ Քարնին կլինի եվրոպական այս ձեւաչափի հիմնադրումից ի վեր առաջին ոչ եվրոպացի առաջնորդը, ով որպես հյուր կմասնակցի այս հավաքին: Ըստ պաշտոնական հաղորդագրության, գագաթնաժողովը կանցնի «Կառուցելով ապագան. միասնություն եւ կայունություն Եվրոպայում» կարգախոսի ներքո:

«Երեւանում քննարկումները կկենտրոնանան ժողովրդավարության դիմադրողականության ամրապնդման, հաղորդակցությունների զարգացման եւ տնտեսական ու էներգետիկ անվտանգության ամրապնդման վրա: Մասնակիցները կքննարկեն՝ ինչպես կարող են ավելի սերտ համագործակցելով եւ համակարգված գործողություններով նպաստել ավելի դիմացկուն, անվտանգ եւ միասնական եվրոպական տարածքի ստեղծմանը»,-հայտարարել է Եվրահանձնաժողովը:

ՈՉՆՉԱՑՎԵԼ Է 1000 ՕԲՅԵԿՏ

Իսրայելի պաշտպանության ուժերը հայտարարել են Լիբանանի հարավում «Հեզբոլլահի» 1000 օբյեկտների եւ կառույցների ոչնչացման մասին:

«Հարավային Լիբանանում 91-րդ դիվիզիայի հրամանատարության ներքո գտնվող «Ցախալի» զորքերը ոչնչացրել են ավելի քան 1000 ահաբեկչական ենթակառուցվածքային օբյեկտներ, որոնք «Հեզբոլլահը» օգտագործում էր հարձակումներ իրականացնելու համար, այդ թվում՝ ականապատ կառույցներ եւ զենքի պահեստներ», - ասվում է հայտարարության մեջ:

Զինվորականները չեն նշել, թե որքան ժամանակահատվածում են ոչնչացվել այդքան թվով օբյեկտները:

Պաշտոնապես Լիբանանի եւ Իսրայելի միջեւ հրադադար է պահպանվում, սակայն իսրայելական ինքնաթիռներն ու հրետանին շարունակում են ամեն օր հարվածներ հասցնել Լիբանանի տարածքին: «Հեզբոլլահը» պատասխանում է սահմանային գոտում իսրայելական զորքերի վրա հարձակումներով:

ՈՎ Է ՆԵԼԼԻ ԲԱՎԵՅԱՆԸ

ՍՈՑՅԱՆՅԱՅԻՆ ԱԿՏԻՎԻՍՏԻՑ ՄԻՆՉԵՎ ՔՊ ՅՈՒՅԱԿ

ArmLur.am-ը շարունակում է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ընտրական ցուցակի մանրազնին ուսումնասիրությունը՝ հերթով ներկայացնելով այն անունները, որոնք լայն հանրությանը գրեթե անհայտ են:

Ցուցակի 78-րդ հորիզոնականում ընդգրկված է Նելլի Էդիկի Բավեյանը: ԵՊՀ պաշտոնական կայքից պարզվում է, որ նա դասավանդում է Փիլիսոփայության եւ հոգեբանության ֆակուլտետի սոցիալական եւ կլինիկական հոգեբանության ամբիոնում՝ որպես ժամավճարով դասախոս: Սակայն նրա մասնագիտական եւ հասարակական գործունեության վերաբերյալ բաց աղբյուրներում գրեթե ոչինչ չկա:

Փոխարենը Բավեյանի սոցիալական հարթակները բավական խոսուն են: Նա աչքի է ընկնում ընդգծված քաղաքական ակտիվությամբ՝ հետեւողականորեն տարածելով եւ պաշտպանելով «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության օրակարգը: Տեսանյութերով եւ գրառումներով նա ակտիվորեն հիմնավորում է թե՛ կուսակցության, թե՛ վարչապետ Նիկոլ Փաշինյանի գործունեությունը:

Միեւնույն ժամանակ, նրա էջերից տեղեկանում ենք, որ Բավեյանը աշխատում է որպես գլխավոր հաշվապահ NIG ԲԲԸ-ում: Նա նաեւ պարբերաբար լուսաբանում է Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի նիստերը, մասնակցում տարբեր քաղաքական միջոցառումների, առցանց արշավների եւ կուսակցական նախաձեռնությունների:

Ակտիվ ՔՊ-ականը բաց չի թողնում նաեւ Փաշինյանի մասնակցությամբ համերգային ծրագրերը՝ սոցիալական հարթակներում տարածելով համապատասխան բովանդակություն եւ ներգրավվելով քարոզչական հոսքերում:

Չնայած այս ակտիվությանը՝ նրա կենսագրության եւ մասնագիտական ուղու մասին համապարփակ տեղեկատվությունը շարունակում է մնալ սահմանափակ: ArmLur.am-ը կշարունակի ուսումնասիրել ընտրական ցուցակում ընդգրկված մյուս թեկնածուներին՝ հանրությանը առավել ամբողջական պատկեր ներկայացնելու նպատակով:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԹԱԳԱՎՈՐ ՉԱՐԼԶԸ ԿԽՈՍԻ

Մեծ Բրիտանիայի թագավոր Չարլզ III-ը նախատեսում է ԱՄՆ Կոնգրեսում իր ելույթում ընդգծել բրիտանա-ամերիկյան միասնության կարեւորությունը՝ միաժամանակ կոչ անելով պաշտպանել ժողովրդավարական արժեքները: Ինչպես հայտնում է Reuters-ը, այս ուղերձը կհնչի այն պահին, երբ երկու երկրների միջեւ առկա են տարաձայնություններ՝ կապված Իրանի պատերազմի եւ արտաքին քաղաքականության հարցերի հետ: Չարլզ III-ը եւ թագուհի Կամիլան գտնվում են ԱՄՆ-ում պետական այցով, որի նպատակն է ամրապնդել «հատուկ հարաբերությունները» Լոնդոնի եւ Վաշինգտոնի միջեւ: Թագավորը, ըստ աղբյուրների, կխուսափի ուղղակի քաղաքական հակասություններից, սակայն կնշի խաղաղության, ժողովրդավարության եւ համագործակցության ընդհանուր արժեքները: Նրա ելույթը կլինի երկրորդը պատմության մեջ, երբ բրիտանական միապետը դիմում է ԱՄՆ Կոնգրեսին՝ հիշեցնելով նաեւ Եղիսաբեթ II-ի 1991 թվականի ելույթը:

Այցը տեղի է ունենում ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփ-ի եւ Մեծ Բրիտանիայի իշխանությունների միջեւ աճող լարվածության պայմաններում, մասնավորապես՝ Իրանի դեմ ռազմական գործողություններին Լոնդոնի չմասնակցելու եւ Ֆոլքլենդյան կղզիների հարցի շուրջ տարաձայնությունների ֆոնին: Չարլզի ելույթից հետո նախատեսվում է պետական ընթրիք, իսկ այցի ընթացքում նա կայցելի նաեւ Նյու Յորք՝ սեպտեմբերի 11-ի զոհերի հիշատակին հարգանքի տուրք մատուցելու համար:

ԿԱՆԱԴԱՆ ՈՒԿՐԱԻՆԱՅԻ ՀԵՏ

Կանադական Sentinel ընկերությունը կարող է համատեղ ձեռնարկություն ստեղծել անանուն ուկրաինական ընկերության հետ՝ Ուկրաինայի զինված ուժերի համար Կանադայում անօդաչու թռչող սարքեր արտադրելու համար, հաղորդում է The Globe and Mail-ը: Ըստ իր աղբյուրների՝ ներկայումս բանակցություններ են ընթանում Կանադայի եւ Ուկրաինայի պաշտպանության նախարարությունների միջեւ: Հաջողության դեպքում անօդաչու թռչող սարքերի արտադրությունը կսկսվի Կանադայում: Ակնկալվում է, որ Կանադայի կառավարությունը կգնի այդ անօդաչու թռչող սարքերը, ապա կփոխանցի դրանք ուկրաինական բանակին: Թերթը նշել է, որ Ուկրաինայում հակամարտության սկզբից ի վեր Օտտավան Կիեւին տրամադրել է 6,5 միլիարդ դոլարի ռազմական օգնություն:

ՄՆԱՑԵԼ ԵՆ ԱՌԱՆՑ ՄՆԴԻ

Սոմալիում ծանր թերսնուցմամբ տառապող երեխաները հայտնվել են ավելի խոր ճգնաժամի մեջ՝ ԱՄՆ-ի եւ Իսրայելի կողմից Իրանի դեմ պատերազմի ֆոնին: Ինչպես հայտնում է Reuters-ը, մատակարարումների խափանումների պատճառով բժշկական կենտրոնները ստիպված են սահմանափակել բուժիչ սննդի օգտագործումը եւ նույնիսկ մերժել երեխաներին, որոնք գտնվում են կյանքի համար վտանգավոր վիճակում: Տվյալների համաձայն՝ երկրում մինչեւ հինգ տարեկան մոտ կես միլիոն երեխա տառապում է սուր թերսնուցմամբ: Բժիշկները նշում են, որ կենսական նշանակություն ունեցող սննդային խառնուրդների եւ հատուկ կաթի պաշարները արագ սպառվում են, իսկ նոր մատակարարումները ուշանում են եւ թանկացել են մի քանի անգամ: Օրինակ՝ սննդային մածուկի մեկ տուփի գինը աճել է 55 դոլարից մինչեւ 200 դոլար, ինչի հետեւանքով օգնությունը հասնում է շատ ավելի քիչ երեխաների:

Մատակարարումների ուշացումները կապված են նաեւ ծովային փոխադրումների խափանումների հետ, մասնավորապես՝ Հորմուզի նեղուց-ի շուրջ ստեղծված իրավիճակով: Մինչ պատերազմը սննդի առաքումը տեւում էր մոտ մեկ ամիս, այժմ՝ մինչեւ երկու ամիս: Մինչդեռ երկրում արդեն շուրջ 6.5 միլիոն մարդ կանգնած է սուր սովի առաջ, իսկ միջազգային կազմակերպությունները զգուշացնում են, որ եթե ֆինանսավորումը չավելանա, Սոմալիում կարող է սկսվել լայնածավալ սով:

ԱՅՑԻՑ 2 ԱՄԻՍ ԱՌԱՋ

ԿԱԴՐԱՅԻՆ ՋԱՐԴ՝ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՈՒՄ

Երեկ Գլխավոր դատախազությունը պաշտոնապես հայտնեց, որ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանի՝ 2026 թվականի փետրվար, մարտ եւ ապրիլ ամիսների հրամաններով՝ դատախազությունում տեղի են ունեցել կադրային մի շարք փոփոխություններ:

Ուշագրավն այն է, որ, ուսումնասիրելով պաշտոնական հաղորդագրությունը, նկատում ենք, որ Արարատի մարզում կադրային ջարդ է:

Մասնավորապես, Արարատի մարզում միանգամից երեք դատախազ ազատվել են պաշտոնից՝ Արարատի մարզի դատախազության դատախազ Գեղամ Մկրտչյանը, Արարատի կայազորի զինվորական դատախազության դատախազ Սյուզաննա Հովհաննիսյանը եւ Արարատի մարզի դատախազության ավագ դատախազ Հարություն Սարգսյանը:

Նկատենք, որ Գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանի գլխավորությամբ 2026 թվականի փետրվարի 10-ին ամփոփվել էին Արարատի մարզի դատախազության 2025 թվականի աշխատանքները: Աննա Վարդապետյանն Արարատի մարզի դատախազին եւ դատախազության դատախազներին տվել է մի շարք հանձնարարականներ՝ ուղղված պետական եւ համայնքային շահերի պաշտպանությանը, մարզում հանցագործությունների կանխարգելմանն ու բացահայտմանը: Եւ ահա Գլխավոր դատախազի՝ 2 ամիս առաջ տեղի ունեցած այցից հետո դատախազներ են ազատվում:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

«ՓԱԽՉՈՂ ՉԵՄ»

Երեկ Հակակոռուպցիոն դատարանում «Ուժեղ Հայաստան» կուսակցության անդամ Արթուր Ավանեսյանը՝ հայտնի Կանդազը, ոտքի է կանգնել եւ մեկ հայտարարություն արել իր դեմ հարուցված քրեական վարույթի շրջանակներում:



ArmLur.am-ին դռնփակ դատական նիստից մանրամասներ են հայտնի դարձել, որ վերջինս ասել է. «Խնդրում եմ՝ մի՛ արեք արտահայտություն, որ կփախնի, ես փախչող չեմ»:

Երեկ Հակակոռուպցիոն կոմիտեն ձերբակալել էր «Ուժեղ Հայաստան» կուսակցության անդամ Արթուր Ավանեսյանին՝ Կանդազին: Վերջինիս կալանավորել են: Հարուցված վարույթն առնչվում է ընտրակաշառքին:

Նշենք՝ Ավանեսյանը 2026թ. Ազգային Ժողովի ընտրություններին մասնակցելու հայտ ներկայացրած «Ուժեղ Հայաստան» քաղաքական թիմի անդամ է, համակարգում է անվտանգության հարցերը: Նա հայտնի հետախույզ է, մասնակցել է արցախյան պատերազմներին: Ըստ նախաքննական մարմնի կողմից ներկայացված ձայնագրության՝ Արթուր Ավանեսյանը զրուցում է կոնկրետ անձանց հետ եւ բանակում աշխատանքի տեղավորելու խոստումներ է տալիս:

Արդյունքում դատարանը բավարարեց նախաքննական մարմնի միջնորդությունը, եւ Արթուր Ավանեսյանը կալանավորվեց 2 ամսով: Նա այս պահին գտնվում է «Վարդաշեն» քրեակատարողական հիմնարկում:

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ «Ուժեղ Հայաստան» կուսակցության անդամ Արթուր Ավանեսյանին՝ Կանդազին կալանավորած դատավորը Հակակոռուպցիոն դատարանի դատավոր Արամ Գրիգորյանն է: Վերջինս քննում է ՀՀ երրորդ նախագահ Սերժ Սարգսյանի, ՀՀ նախկին վարչապետ Հովիկ Աբրահամյանի, ՀՀ պաշտպանության նախկին նախարար Սեյրան Օհանյանի կնոջ՝ Ռուզաննա Խաչատրյանի դեմ հարուցված քրեական վարույթները:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ԿԵՂԾ ԹՂԹԱԴՐԱՄՆԵՐ

ՀՀ քննչական կոմիտեի հատկապես կարեւոր գործերի քննության գլխավոր վարչության ընդհանուր բնույթի եւ ընտրական հանցագործությունների քննության վարչությունում ավարտվել է մի խումբ անձանց կողմից կեղծ թղթադրամներ իրացնելու դեպքի առթիվ նախաձեռնված քրեական վարույթի նախաքննությունը: Նախաքննության ընթացքում պարզվել է, որ Մ.Հ.-ն իր ծանոթներ՝ Ռ.Ա.-ի, Է.Խ.-ի, Ն.Կ.-ի հետ խմբի կազմում, 2025 թվականի մայիսից դեկտեմբերն ընկած ժամանակահատվածում տարբեր անձանց իրացրել է ընդհանուր 1 հատ 100.000 ՀՀ դրամ, 20 հատ 50.000 ՀՀ դրամ, 1 հատ 20.000 ՀՀ դրամ, 5 հատ 10.000 ՀՀ դրամ կեղծ թղթադրամներ՝ խարդախությամբ հափշտակելով 1 մլն 149 հզր 860 ՀՀ դրամի գույք: Մ.Հ.-ի, Ռ.Ա.-ի, Է.Խ.-ի եւ Ն.Կ.-ի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում՝ 29 դրվագ գործողությամբ կեղծ արժույթ իրացնելու եւ խարդախություն կատարելու համար: Մ.Հ.-ի եւ Ռ.Ա.-ի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է տնային կալանքը, Է.Խ.-ի եւ Ն.Կ.-ի նկատմամբ՝ վարչական հսկողությունը: Քրեական վարույթը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է հսկող դատախազին:

ԲԱՑԱՀԱՅՏԵԼ ԵՆ

Համայնքային ոստիկանության Մասիսի բաժնի ծառայողները ստացել էին օպերատիվ տեղեկություն, որ Արբաթ գյուղի բնակիչ մի երիտասարդ, իր հանցավոր նպատակների իրականացմանը ներգրավելով անչափահաս համագյուղացու, կատարել է բնակարանային գողություններ: Հետագա միջոցառումներով պարզվեց, որ այս տարվա փետրվարին, օգտվելով տանտիրուհու բացակայությունից, 30-ամյա երիտասարդը կոտրել է համագյուղացու տան դուռը, հափշտակել կենցաղային իրեր եւ բջջային երկու հեռախոս ու հեռացել պատուհանով, իսկ այդ ընթացքում 16-ամյա պատանին դրսում հսկել է իրավիճակը: Ապրիլի 15-ին 30-ամյա երիտասարդը ձերբակալվել է, տեղափոխվել համայնքային բաժին, որտեղ խոստովանել է արարքը: Արարքը խոստովանել է նաեւ անչափահասը:

ԹՄՐԱՄԻՋՈՑ ԵՆ ՀԱՅՏՆԱԲԵՐԵԼ

Համայնքային ոստիկանության Արմավիրի բաժնի ծառայողները ապրիլի 27-ին օպերատիվ տեղեկություններ էին ստացել, որ Ակնալիճ գյուղի 27-ամյա բնակիչը տանը եւ հարակից շինությունում կանեփից պատրաստած թմրամիջոց է պահում: Նախաձեռնված քրեական վարույթի շրջանակում կատարված զննությամբ 27-ամյա երիտասարդի տան նկուղում հայտնաբերվել է ընդհանուր 122 գրամ մարիխուանա տեսակի թմրամիջոցի նմանվող զանգվածով 2 փաթեթ: Բացատրական աշխատանքի արդյունքում երիտասարդը հայտնել է, որ հայտնաբերված թմրամիջոցը պատրաստել է իր աճեցրած կանեփից: Նա ձերբակալվել, տեղափոխվել է Արմավիրի բաժին, ապա կազմված փաստաթղթերի հետ ներկայացվել նախաքննական մարմին: Ակնալիճ գյուղի բնակիչ 27-ամյա երիտասարդը տեղափոխվել է ձերբակալվածների պահման վայր:

● *Ապրիլի 27-ից 28-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է անձնական ունեցվածքի գողության 3 դեպք:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԿԳՄՍ-Ն ՍԱԲՈՏԱԺՈ՞Վ Է ԶԲԱՂՎԱԾ

2024թ. մարտի 28-ի որոշմամբ նույն տարվա հուլիսին կայացել է Դիլիջան քաղաքի Ուսանողական 70 հասցեում գործող «Դիլիջանի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի եւ Դիլիջան քաղաքի Ուսանողական 74 հասցեում գործող «Դիլիջանի պետական բժշկական քոլեջ» ՊՈԱԿ-ի միավորումը: Միավորված քոլեջը կոչվում է Դիլիջանի պետական բազմագործառնույթային քոլեջ: Կառավարության որոշման մեջ որպես միավորման հիմնավորում նշվել է՝ ելնելով Դիլիջան քաղաքում սովորողների թվաքանակի նվազեցման միտումից եւ ուսումնական հաստատություններին ամրացված տարածքների օպտիմալ օգտագործման պահանջից: Դիլիջանի բազմագործառնույթային քոլեջն ունի մոտ 400 ուսանող, որոնց մոտ կեսը բժշկական գործ է ուսանում: Դիլիջանի բազմագործառնույթային քոլեջի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար է նշանակվել նախկինում Դիլիջանի պետական քոլեջի տնօրեն Վահագն Հովհաննիսյանը: Անցած 2 տարում Դիլիջանի բազմագործառնույթային քոլեջի տնօրենի թափուր պաշտոնի համար բազմաթիվ անգամ մրցույթ է հայտարարվել, որին, որպես Դիլիջանի բազմագործառնույթային քոլեջի տնօրենի պաշտոնի հավակնորդ, մասնակցել է Վահագն Հովհաննիսյանը: Այդ մրցույթները չեն կայացել, քանի որ ԿԳՄՍ նախարարության ներկայացուցիչը չի ներկայացել: Ապրիլի 17-ին ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանին հետեւյալ տեղեկատվական հարցումն եմ արել. «Վահագն Հովհաննիսյանը ավելի քան 2 տարի Դիլիջանի պետական բազմագործառնույթային քոլեջի տնօրենի պաշտոնակատարն է: 2024 թվականից մինչ այժմ քանի՞ անգամ է այդ քոլեջի տնօրենի մրցույթ հայտարարվել, քանի՞ անգամ ԿԳՄՍ նախարարության ներկայացուցիչը չի մասնակցել այդ մրցույթներին, ինչո՞ւ չի մասնակցել»: ԿԳՄՍ նախարարի տեղակալ Ա. Սվաջյանի պատասխանում նշված է. «Վահագն Հովհաննիսյանը 2024 թվականի մայիսի 21-ին նշանակվել է որպես «Դիլիջանի պետական բազմագործառնույթային քոլեջ» ՊՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար: 2025 եւ 2026 թվականների ընթացքում տնօրենի թափուր տեղի համալրման համար պարբերաբար հայտարարվել են մրցույթներ, որոնք չեն կայացել տարբեր պատճառներով: Ինչ վերաբերվում է լիազոր մարմնի մասնակցությանը, ապա հարկ եմ համարում նշել, որ ներկայությունը հնարավոր չի եղել ապահովել աշխատանքային ծանրաբեռնվածության պատճառով»: ԿԳՄՍ նախարարությունից չեն պատասխանել այն հարցին, թե 2024-2026թթ. ընթացքում քանի անգամ է Դիլիջանի պետական բազմագործառնույթային քոլեջի տնօրենի թափուր պաշտոնի համար մրցույթ հայտարարվել, ինչ պատճառներով դրանք չեն կայացել: Եթե լիազոր մարմնի՝ ԿԳՄՍ-ի ներկայացուցչի մասնակցությունը աշխատանքային ծանրաբեռնվածության պատճառով հնարավոր չի եղել ապահովել, ապա նախարարությունը կարող էր այլ ներկայացուցիչ ուղարկել այդ մրցույթին: Ինչն անցած 2 տարվա ընթացքում չի արել:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՀԱՋԱՆԳ

ԳԱԶԸ ՎԱՃԱՌՎՈՒՄ Է ՄԻԱՅՆ ԿՏՐՈՆՆԵՐՈՎ

ArmLur.am-ը տեղեկացավ, որ ՀՀ-ում հեղուկ գազի շուկայում ստեղծվել է բացահայտ խայտառակ եւ անթույլատրելի իրավիճակ: Վարորդները ահազանգում են՝ գազալցակայաններում կա՛մ ընդհանրապես գազ չկա, կա՛մ այն վաճառվում է միայն «ընտրյալներին»՝ կտրոնների միջոցով:

Փաստացի, ձեւավորվել է ստվերային, փակ շրջանառություն, որտեղ սովորական սպառողը դուրս է մղվել շուկայից: Գազը հասանելի է միայն «հիմնական հաճախորդներին», ինչը ոչ միայն խախտում է ազատ մրցակցության սկզբունքները, այլ նաեւ ստեղծում է սոցիալական լարվածություն: Վարորդները հայտնվել են անելանելի վիճակում:

Ի՞նչ է իրականում տեղի ունենում

Այս իրավիճակը սովորական դեֆիցիտ չէ: Սա կառավարման, վերահսկողության եւ շուկայի կարգավորման լուրջ ձախողում է: Երբ ապրանքը վաճառվում է ոչ թե ազատ շուկայում, այլ «կտրոնային համակարգով», դա արդեն ազդանշան է, որ կա կա՛մ արհեստական սահմանափակում, կա՛մ մատակարարման խափանում, կա՛մ մենաշնորհային դիրք:

Ո՞վ է պատասխանատուն

Կառավարություն եւ ոլորտի պատասխանատու մարմինները:

Եթե շուկայում կա դեֆիցիտ, ապա պետության պարտականությունն է՝ ապահովել մատակարարումների կայունություն, կանխել արհեստական գների կամ հասանելիության մանիպուլյացիաները, վերահսկել գազի ներկրումն ու բաշխումը: Եթե դա չի արվում, ապա սա արդեն կառավարման բացթողում է:

Մրցակցության պաշտպանության մարմիններ

Եթե գազալցակայանները լիցքավորում են միայն «իրենց մարդկանց», սա կարող է վկայել համաձայնեցված գործողությունների շուկայի բաժանման կամ մենաշնորհային դիրքի չարաշահման մասին:

Այս դեպքում համապատասխան մարմինները պարտավոր են անհապաղ միջամտել:

Գազ ներկրող եւ բաշխող ընկերություններ

Եթե դեֆիցիտը արհեստական է կամ շահարկվում է՝ գինը բարձրացնելու կամ սահմանափակ վաճառք իրականացնելու նպատակով, ապա դա արդեն բիզնեսի կողմից անպատասխանատու եւ հնարավոր է՝ ապօրինի վարքագիծ է:

Սա պարզապես գազի պակաս չէ: Սա համակարգային խնդիր է, որտեղ շուկան դադարել է գործել թափանցիկ եւ արդար կանոններով: Երբ քաղաքացին ստիպված է «կտրոն» փնտրել՝ վառելիք ստանալու համար, դա արդեն ոչ թե տնտեսություն է, այլ փակ ակումբ:

Եթե իրավիճակը շուտափույթ չկարգավորվի, այն կարող է վերածվել ավելի լայն սոցիալական եւ տնտեսական ճգնաժամի:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՈՐՏԵ՞Ղ Է ՌՈՒԲԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆԸ

Երեկ առավոտյան հայտնի դարձավ, որ գործարար Ռուբեն Վարդանյանը տեղափոխվել է ափվի Ղարադաղի շրջանի Ումբակի բանտային համալիր: Տեղեկությունը NEWS.am-ին հայտնել է «Միջազգային եւ համեմատական իրավունքի կենտրոնի» ղեկավար, ՄԻԵԴ-ում հայ գերիների շահերի ներկայացուցիչ Սիրանուշ Սահակյանը՝ նշելով, որ այդ մասին տեղեկություն ունի Վարդանյանի ընտանիքից:



Ըստ Սահակյանի՝ Վարդանյանը Ազգային անվտանգության ծառայության ենթակայության տակ գտնվող քննչական մեկուսարանից տեղափոխվել է Արդարադատության նախարարության ենթակայության քրեակատարողական հիմնարկ: Նույն աղբյուրի փոխանցմամբ՝ այդ նույն հաստատություն են տեղափոխվել նաեւ այլ հայ գերիներ:

ArmLur.am-ը, ստանալով այս տեղեկությունը, փորձեց հասկանալ՝ ինչ բանտային հաստատություն է Ումբակը եւ ինչ պայմաններ են այնտեղ:

Ադրբեջանական պաշտոնական աղբյուրների համաձայն՝ Ումբակի բանտային համալիրը նորակառույց է եւ շահագործման է հանձնվել 2023 թվականին: Այն ներկայացվում է որպես միջազգային չափանիշներին համապատասխանող, խառը ռեժիմով բանտային հաստատություն, որը բաղկացած է երկու հատվածից՝ պատժի կրման հիմնարկից եւ նախաքննական մեկուսարանից: Հիմնարկում պահվում են ծանր եւ այլ հանցագործությունների համար ազատազրկված դատապարտյալներ, իսկ մեկուսարանում՝ մեղադրյալներ:

Նույն աղբյուրների համաձայն՝ համալիրի ընդհանուր տարողունակությունը կազմում է շուրջ 1300 մարդ, կառուցված են 19 տարբեր ռեժիմով խցային կորպուսներ: Պաշտոնական հաղորդագրություններով ընդգծվում է նաեւ, որ համալիրում ապահովված են պայմաններ քննիչների եւ փաստաբանների աշխատանքի համար, առկա են տեսազանգերի եւ տեսակոնֆերանսների միջոցով դատական նիստերին մասնակցելու հնարավորություններ:

Սակայն, ինչպես ընդգծում է Սիրանուշ Սահակյանը, նոր հաստատությունում հայ գերիների պահման պայմանների վերաբերյալ որեւէ հավաստի տեղեկատվություն չկա: Նրա խոսքով՝ բացակայում է թափանցիկությունը, ընտանիքի անդամներին նախապես չի տեղեկացվել տեղափոխման մասին, իսկ միջազգային կառույցների մոնիթորինգը փաստացի չի իրականացվում: Սահակյանը նաեւ նշում է, որ ներկայումս տեղեկություններ չեն հրապարակվում գերիների առողջական վիճակի, բժշկական օգնության հասանելիության եւ ընդհանուր կենսապայմանների վերաբերյալ: Նրա գնահատմամբ՝ ստեղծված տեղեկատվական վակուումը ինքնին լուրջ մտահոգության առիթ է:

Միաժամանակ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը պարտավորեցրել է Ադրբեջանին մինչեւ օգոստոսի 31-ը տրամադրել գերիների դատավճիռները: Իրավապաշտպանի խոսքով՝ անգամ այդ փաստաթղթերի չտրամադրումը չի կարող փակել միջազգային դատական ատյաններ դիմելու հնարավորությունը:

ArmLur.am-ը շարունակում է հետեւել զարգացումներին՝ փորձելով պարզել, թե իրականում ինչ պայմաններում են պահվում հայ գերիները, եւ արդյոք դրանք համապատասխանում են միջազգային չափանիշներին:

Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ

● *Ըստ վիճակագրական տվյալների՝ Հայաստանի Հանրապետությունում հայտնաբերվել է 9 հետախուզվող, կամավոր ներկայացել՝ 1-ը:*

«ՍՈՖԹ ԿՈՆՍՏՐԱԿՏ»

«Սոֆթ Կոնստրակտ» ընկերությունը ս.թ. ապրիլի 18-19-ը «Մերիդիան» էքսպո կենտրոնում մասնակցել է «Career City Fest 2K26» լավագույն գործատուների ցուցահանդեսին՝ ներկայացնելով ընկերության թափուր աշխատատեղերը, կորպորատիվ մշակույթն ու մասնագիտական աճի հնարավորությունները:

SS ոլորտի առաջատար «Սոֆթ Կոնստրակտ» ընկերության տաղավարը երկու օրերի ընթացքում հարյուրավոր այցելուներ է ընդունել, ներկայացվել են ընկերության ազատ հաստիքներն ինչպես սկսնակ մասնագետների համար, այնպես էլ՝ փորձառու:

«Բադալյան եղբայրներ» ընկերություններ խմբի ՄՌԿ տնօրեն Մարիա Կարապետյանն էլ ներգրավվել է մարդկային ռեսուրսների կառավարման մասնագիտական քննարկումներին՝ հանդիսադրելով ընկերության աշխատուժի ձեւավորման առանցքային ուղղությունները: Պանելային քննարկման շրջանակներում բանախոսներն անդրադարձել են պետական եւ մասնավոր հատվածների աշխատաշուկայի մրցակցության տենդենցներին եւ հնարավորություններին:

Անդրադառնալով ընկերության վերջին երկու տարվա բարեփոխումներին՝ Մարիա Կարապետյանը նշել է, որ «Սոֆթ Կոնստրակտ» ընկերությունը Հայաստանում առաջին անգամ ներդնելու է գլոբալ մասնագիտական համայնքին քաջ հայտնի «Workday» ՄՌ կառավարման նորարարական գործիքակազմը: Նա ընդգծել է, որ գործիքակազմը տարածաշրջանի մակարդակով առանձնացնելու է Խմբի բոլոր ընկերությունների աշխատակիցներին: «Դա մարդկային ռեսուրսների կառավարման համապարփակ ծրագիր է, որը թույլ է տալիս գործատուներին եւ ղեկավարներին արդյունավետ կառավարել մարդկային կապիտալը, սկսած տաղանդների ներգրավումից, աշխատակիցների զարգացումից, կատարողականի կառավարում, ժամանակի կառավարում եւ շատ ավելին», - ասել է նա:

Հավելենք, որ փառատոնն իրականացվել է «Career City Fest 5th Generetion» կարգախոսի ներքո, որը խորհրդանշում է փառատոնի 5-ամյակն ու ցուցահանդեսը՝ որպես 5 սերունդների հանդիպման վայր: «Սոֆթ Կոնստրակտ» ընկերությունը երրորդ տարին անընդմեջ մասնակցում է «Career City Fest» ցուցահանդեսին եւ Հայաստանի լավագույն գործատուներից է: *(Գ)*

Հայտարարություն

Ես՝ Միլենա Մելքումյանս, հայտարարում եմ, որ կորցրել եմ Երեւանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի կողմից 2024 թվականին ինձ տրված դիպլոմը՝ AD 101619:

Խնդրում եմ նշված դիպլոմը համարել անվավեր:

Հայէկոնոմբանկ Գ

ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՇՏՊԱՆՈՒՄ Է ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

Թվային դարաշրջանում բանկային գործարքները դարձել են վայրկենական: Փոխակերպումների են ենթարկվել նաեւ առցանց տիրույթում ֆինանսական զեղծարարության եւ խարդախության դեմքերը: Բանկի անվտանգությունն այլեւս միայն ամուր դռներն ու չհրկիզվող պահարանները չեն, այլ բարդ ալգորիթմները եւ համապատասխանության համակարգը:

Հայէկոնոմբանկի Համապատասխանության վարչության պետ Կարեն Ադամյանը խոսել է Հայաստանի ֆինանսական համակարգում զեղծարարության եւ խարդախության ամենատարածված սցենարների, դրանց կանխարգելման կամ զեղծարարներից «մեկ քայլ առաջ» լինելու անհրաժեշտության եւ այն մասին, թե, ի վերջո, որտեղ է ավարտվում Բանկի պատասխանատվությունը եւ սկսվում հաճախորդի անձնական պատասխանատվության դաշտը:

Որո՞նք են այսօր ՀՀ ֆինանսական համակարգում զեղծարարության եւ խարդախության ամենատարածված սցենարները, եւ թվայնացման խորացմանը զուգահեռ՝ ի՞նչ փոխակերպումների են ենթարկվում դրանք:

Հայաստանում ամենատարածված խարդախությունները ներկայում առավելապես կապված են առցանց միջավայրում տարատեսակ գործիքների կիրառման հետ: Մասնավորապես, տարածված է սոցիալական ինժեներիան, երբ զանգերի միջոցով զեղծարարները ներկայանում են որպես բանկի, հեռահաղորդակցական ընկերության կամ ՀՀ Կենտրոնական բանկի աշխատակից՝ օգտագործելով տարբեր պատրվակներ, օրինակ՝ 5G կապի ծառայության կարգաբերումների անհրաժեշտություն, անձի բանկային տվյալների պաշտպանություն, հաշիվներին հասանելիության կասեցում եւ փորձում են անձնական տվյալներ կորզել: Այս սցենարի շրջանակում հաճախ օգտագործվում է նաեւ SMS կամ Email Phishing-ը:

Առցանց խարդախություններն իրականացվում են ինքնության կեղծման միջոցով (Identity Theft). ստանալով հասանելիություն հաճախորդի բանկային տվյալներին՝ զեղծարարները կարող են վարկեր ձեւակերպել այդ անձի անունով, այլ անձի փոխանցել նրա տվյալները, ընդհուպ մինչեւ հաշիվներ, քարտեր բացել եւ օգտագործել դրանք տարատեսակ տարբեր չարտոնված փոխանցումների սխեմաներում:

Տարածված են առցանց առաջարկները, երբ թիրախավորվում են հստակ սոցիալական խմբեր: Զեղծարարներն, օգտագործելով կեղծ կայքեր, նրանց առաջարկում են «արագ, մատչելի վարկ», շահավետ պայմաններով ներդրումային կամ կրիպտո գործարքների կամ բանկային տվյալների «վարձակալության» առաջարկներ են անում, եւ մարդիկ «պասիվ» եկամուտ ստանալու ակնկալիքով ներքաշվում են խարդախությունների մեջ:

Շատ են հանդիպում նաեւ խաղարկությունների կամ շահումների կեղծ խոստումներ, երբ հաճախ օգտագործվում են բանկերի կամ հայտնի ընկերությունների կայքերին եւ սոցիալական ցանցերի էջերին շատ նման կեղծ կայքեր, էջեր: Կիրառվում են տեխնոլոգիական խարդախություններ, SIM swap՝ հասանելիություն են ստանում հաճախորդի սարքին (SMS-կոդեր, OTP-ներ, զանգերի վերահսկում):

Արդեն դասական դարձած խարդախության տեսակ է քարտային տվյալների օգտագործումը (Card Fraud) չարտոնված վճարումների եւ փոխանցումների իրականացման համար:

Նշված սցենարները հիմնականում կիրառվում են տարբեր համադրություններով: Պետք է հիշել, որ խարդախություն կազմակերպիչներն ունեն շատ վառ երեւակայություն, լավ պատրաստված հոգեբաններ, զգալի ռեսուրսներ, տեխնոլոգիաներ եւ հետեւողականորեն փորձարկում են ինչպես ֆինանսական համակարգի մասնակիցների գործիքները, այնպես էլ իրենց կողմից մշակված սցենարները:

Ինչպե՞ս է Հայէկոնոմբանկը հավասարակշռում հաճախորդների համար գործարքների պարզությունն ու արագությունը եւ բանկային անվտանգության խիստ պահանջները:

Հաճախորդների անվտանգ եւ որակյալ սպասարկումը մեր առաջնահերթությունն է ցանկացած իրավիճակում: Մենք գիտակցում ենք, որ այսօր գործարքների արագությունն ու պարզությունը շատ կարեւոր են եւ ձգտում ենք ապահովել դա՝ պահպանելով անվտանգությունը:

Հաճախորդների սպասարկումը եւ գործառնական արդյունավետությունը բարելավելու համար ժամանակակից բանկինգը կենտրոնանում է «3 S»-երի (Speed, Simplicity and Security) հայեցակարգի վրա, որի իրագործման նպատակով Բանկում օգտագործվում են հետեւյալ հիմնական մոտեցումները.

Ռիսկահեն (Risk Based) ստուգումներ (հսկողական ռեսուրսներն ուղղվում են բարձր ռիսկերին, կիրառվում են լրացուցիչ հաստատման մեխանիզմներ եւ այլն),

Բազմաստիճան, բազմագործոն նույնականացում (2FA - Password + OTP / նույնականացում),

Իրական ժամանակի ռեժիմում մոնիթորինգ, վարքագծային, թիրախային վերլուծություն,

Սահմանափակումներ (օրական ծավալային / գործարքից կախված լիմիտներ)

Համապատասխան տեխնոլոգիաներ (Face ID, Push հաստատումներ):

Հաճախորդի համար գործընթացը մնում է արագ ու պարզ, իսկ ներսում աշխատում է անվտանգության խիստ համակարգ՝ ըստ էության ավելի տեխնոլոգիական եւ կանխարգելիչ:

Մարդիկ շարունակում են ամենամիամիտ խարդախությունների ծուղակն ընկնել (օրինակ՝ հեռախոսով գաղտնաբառ հայտնելը): Որտե՞ղ է ավարտվում Բանկի պատասխանատվությունը եւ սկսվում հաճախորդի անձնական պատասխանատվության դաշտը: Ինչպե՞ս է Բանկը պաշտպանում հաճախորդին իր իսկ սխալներից (երբ հաճախորդն ինքնակամ տալիս է գաղտնաբառը զեղծարարներին):

Ինչպես արդեն նշեցի, Բանկն առաջարկում է ապահով մեխանիզմներ, բազմագործոն նույնականացում (2FA, Push հաստատումներ), կիրառում է սահմանաչափեր, վերծանում է ռիսկերը, իրականացնում է կասկածելի գործարքների ավտոմատ մոնիթորինգ, փորձում է արագ արձագանքել եւ հնարավորության դեպքում կանխում է կորուստը, օրինակ՝ հաշիվների ժամանակավոր սահմանափակում, բլոկավորում կամ հետստուգում:

Միաժամանակ, հարկ է նշել, որ Բանկի պատասխանատվությունն ավարտվում է այն պահին, երբ հաճախորդը ինքնակամ տրամադրում է գաղտնաբառը կամ գաղտնի տվյալները զեղծարարին:

Compliance-ը հաճախ ընկալվում է որպես «բյուրոկրատական գործընթաց»: Ի՞նչ եք անում, որ հաճախորդը հասկանա, որ յուրաքանչյուր լրացուցիչ հարց կամ ստուգում ոչ թե խոչընդոտ է, այլ իր ֆինանսական անվտանգության կարեւոր երաշխիք:

Համապատասխանությունը չի «արգելափակում» հաճախորդին, այլ ստեղծում է պաշտպանական շերտ նրա ֆինանսական անվտանգության համար, եւ այս մասին բաց եւ հասկանալի հաղորդակցություն է պետք իրականացնել:Մասնավորապես, հաճախորդին ներկայացվում են պարզ եւ հասկանալի բացատրություններ, թե ինչու են պահանջվում լրացուցիչ հարցերի պատասխաններ կամ ստուգումներ, ուսումնասիրություններ, ինչի համար են նախատեսված համապատասխան մեխանիզմները (2FA, Push հաստատումներ, բիոմետրիկա)՝ հաշվի առնելով նման դեպքերում տեղեկատվության հետ աշխատելու նրբությունները:

Ի՞նչ համակարգային լուծում եք տեսնում, որը կօգնի արդյունավետ պայքարել ֆինանսական զեղծարարության եւ խարդախության դեմ: Արդյոք կա՞ն օրենսդրական բացեր կամ այլ խնդիրներ, որոնք խոչընդոտում են ֆինանսական զեղծարարության դեմ արդյունավետ պայքարին:

Ըստ էության, առաջին կանխարգելիչ քայլերը թիրախային կրթական միջոցառումներն են՝ ուղղված հանրության ֆինանսական գրագիտության եւ խարդախության մեխանիզմների մասին իրազեկվածության բարձրացմանը, ինչպես օրինակ, Հայաստանի բանկերի միության կողմից իրականացվող «Դու մի ասա» հանրային արշավն է: Վստահ եմ, որ շարունակական եւ հետեւողական միջոցառումները ժամանակի ընթացքում անպայման դրական ազդեցություն են ունենալու:

Հաճախ բավականին դժվար է խարդախության սկզբնական փուլում տարանջատել զոհին եւ (կամ) ներգրավված մասնակցին (օրինակ «միջնորդին»), իսկ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված գործիքակազմը ոչ միշտ է արդյունավետ լուծումներ առաջարկում: Եւ այս առումով կանխարգելիչ միջոցառումների գործիքակազմը բարելավման անհրաժեշտություն ունի, մասնավորապես, սահմանափակումների կիրառման ավելի երկարաժամկետ գործիքների անհրաժեշտություն կա:

Կանխարգելիչ միջոցառումներին զուգահեռ՝ անհրաժեշտ է նաեւ վերանայել, խստացնել պատժիչ միջոցառումների գործիքակազմը, մասնավորապես այսպես կոչված «միջնորդների» (dropper) մասով, որը վերջին տարիներին լայն տարածում է ստացել նաեւ Հայաստանում: Dropper-ները անձինք են, որոնք օգտագործվում են խարդախների կողմից գողացված գումարը փոխանցելու, հաշիվներից դուրս բերելու եւ (կամ) կանխիկացնելու համար: Կարծում եմ՝ այս մասով քրեական օրենսգրքի համապատասխան փոփոխությունները կարող են իրենց դրական ազդեցությունն ունենալ այս երեւույթի դեմ պայքարում:

Ներկայում ակտիվ քննարկումներ են ընթանում նաեւ ապահովագրության՝ Insurance/Zero Liability մեխանիզմների ներդրման շուրջ՝ հաճախորդների հնարավոր կորուստները նվազեցնելու համար:

Ամփոփելով վերոնշյալը՝ պետք է փաստել, որ ֆինանսական զեղծարարության դեմ պայքարը համակարգային մոտեցում է պահանջում անվտանգ եւ վստահելի ֆինանսական միջավայր ձեւավորելու համար:

86 86 | aeb.am

Հայէկոնոմբանկը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից

«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ,հայտարարություն,հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ՉԻՆԱԿԱՆ

ՆՈՐԱՁԵՎՈՒԹՅԱՆ ՍԿԱՆԴԱԼ ՍՊԻՏԱԿ ՏԱՆԸ

ԱՄՆ պաշտպանության նախարար Փիթ Հեգսեթի կինը՝ Ջենիֆեր Ռոշը, խոսակցության թեմա է դարձել Սպիտակ տան թղթակիցների ասոցիացիայի ընթրիքի ժամանակ իր անսպասելի հագուստի ընտրության պատճառով:

Շաբաթ երեկոն, որը հետագայում մթագնել էր Թրամփի վարչակազմի պաշտոնյաների վրա հարձակվելու փորձ կատարած զինված անձի հետ կապված անհանգստացնող միջադեպով, սկսվել էր որպես փայլուն հասարակական միջոցառում. հյուրերը լուսանկարվել էին կարմիր գորգի վրա՝ ցուցադրելով իրենց շքեղ տեսքը եւ քաղաքական ազդեցությունը:

Միջոցառմանը մասնակցել էին ամերիկյան իշխանության առանցքային դեմքեր՝ նախագահ Դոնալդ Թրամփը, առաջին տիկին Մելանյա Թրամփը, մամուլի քարտուղար Քերոլին Լիվիտը, ՀԴԲ տնօրեն Քեշ Պատելը եւ այլ ազդեցիկ դեմքեր:

Այնուամենայնիվ, հենց Հեգսեթի 41-ամյա կինը եւ Fox News-ի նախկին պրոդյուսեր Ջենիֆեր Ռոշը անսպասելիորեն հայտնվել է ուշադրության կենտրոնում: Ելքի համար Ջենիֆերը ընտրել էր մարմինը գրկող նուրբ վարդագույն զգեստ: Զգեստը ուներ էլեգանտ, բաց ուսերով մետաքսե վարագույր, իսկ իրանը ընդգծում էր աչքի ընկնող, փայլուն մետաղական կրծքազարդով գոտին: Կերպարը լրացվել էր ծաղկաթերթերով զարդարված ոճային վարդագույն պայուսակով եւ հաստ արծաթե հյուսված հարթակային սանդալներով, որոնք, ինչպես պարզվել է, նախկինում վաճառվել էին Սթիվ Մեդդենի կողմից:

Կուրծքը, ադամանդե ականջօղերը եւ շքեղ վզնոցը լրացնում էին աչքի ընկնող համադրությունը:

Սակայն իրական սկանդալը բռնկվել է ավելի ուշ: Հազարավոր դոլարներ արժողությամբ դիզայներական զգեստի փոխարեն Ջենիֆերը, ըստ երեւույթին, ընտրել էր բյուջետային տարբերակ. գրեթե նույնական զգեստը գտնվել է Shein արագ նորաձեւության կայքում ընդամենը 42 դոլարով:

ՄԱՐԶԱԿԱՆ

ՎԵՐԱԴԱՌՆՈՒՄ ԵՆ 1 ՄԵԴԱԼՈՎ

Ֆոս դու Իգուասու քաղաքում ավարտվել է բռնցքամարտի Աշխարհի գավաթի խաղարկությունը: Հայաստանի հավաքականը նվաճել է մեկ մեդալ: Աշխարհի փոխչեմպիոն Դավիթ Չալոյանը (+90 կգ) եզրափակչում մրցավարների որոշմամբ պարտվել է 2:3 հաշվով ու դարձել արծաթե մեդալակիր:

Հայաստանի բռնցքամարտի ֆեդերացիայից տեղեկանում ենք, որ իրենք բողոք են ներկայացրել World Boxing-ին կայացված սխալ որոշման համար: Ֆեդերացիան հայտնում է նաեւ, որ մրցավարական բացթողումներ եղել են Հայաստանի այլ ներկայացուցիչների մենամարտերը դատելու ժամանակ եւս. «Մենք հետամուտ ենք լինելու, որպեսզի մրցավարական անադրադարձ որոշումները վերլուծվեն ու հետաքննվեն, իսկ մեղավորները պատժվեն»:

23 ՈՍԿԵ ՄԵԴԱԼ ԵՆ ՆՎԱՃԵԼ

Հայաստանն առաջին անգամ ընդունել է Կիոկուշին կարատեի Աշխարհի գավաթի խաղարկությունը, որին մասնակցել է շուրջ 500 մարզիկ 30 երկրից:

Երեւանի «Գազպրոմ Արմենիա» մարզահամալիրում կայացած մրցաշարում հայ մարզիկները նվաճել են 84 մեդալ՝ 23 ոսկե, 18 արծաթե, 43 բրոնզե: Հայաստանի հավաքականը նաեւ դարձել է թիմային հաշվարկի հաղթող: Երկրորդ տեղը գրավել է Ռուսաստանի հավաքականը, որը տեւական ընդմիջումից հետո առաջին անգամ է մասնակցել միջազգային մրցաշարի: Երրորդ տեղը զբաղեցրել է Լեհաստանի հավաքականը:

Մրցումներն անցկացվել են տարբեր տարիքային խմբերում ու անցել են դիտարժան պայքարում՝ լեփ-լեցուն տրիբունաների ներքո:

Հայաստանի Կիոկուշին կարատեի ֆեդերացիայի նախագահ, շիհան Անդրանիկ Հակոբյանի հրավերով մրցաշարի համար Երեւան էին ժամանել Կիոկուշին կարատեի միջազգային ֆեդերացիայի նախագահ Դեյվիդ Փիքթլը եւ Կիոկուշինի համաշխարհային միության գլխավոր քարտուղար Ալեքսանդր Պիչկունովը:

Հայաստանի Կիոկուշին կարատեի ֆեդերացիան Երեւանում անցկացրել է մի շարք միջազգային մրցաշարեր, այդ թվում՝ Եվրոպայի երեք առաջնություն:

ԼՈՒՐԵՐ

ԿՍՏԱՆԱՆ 10% CASHBACK

Արդշինբանկը մեկնարկել է նոր շահավետ պայմաններով արշավ իր Mastercard քարտապանների համար՝ ընդլայնելով անկանխիկ վճարումների հնարավորությունները:

2026 թվականի ապրիլի 27-ից մինչեւ մայիսի 27-ը ներառյալ Արդշինբանկի Mastercard քարտապանները կարող են օգտվել հատուկ առաջարկից՝ ստանալով 10% cashback գործընկեր ռեստորաններում իրականացված անկանխիկ վճարումների դիմաց:

Նախաձեռնությունը գործում է Երեւանում եւ զբոսաշրջային այլ ուղղություններում տեղակայված հետեւյալ ռեստորաններում՝ «Գինետուն» ռեստորան, «Յասաման» եւ «Սիռովարնյա» ռեստորանների ցանց:

Cashback-ը տրամադրվում է նշված ռեստորաններում Արդշինբանկի Mastercard քարտերով բանկի POS տերմինալներով կատարված վճարումների համար:

Վերադարձվող գումարը կազմում է գործարքի 10%-ը (ներառյալ հարկերը) եւ փոխանցվում է հաճախորդներին առաջարկի ժամկետի ավարտից հետո՝ մեկամսյա ժամկետում:

Յուրաքանչյուր քարտի համար տրամադրվող cashback-ի հանրագումարային առավելագույն սահմանաչափը կազմում է 20,000 ՀՀ դրամ (ներառյալ հարկերը):

Առաջարկը հասանելի է Արդշինբանկի բոլոր Mastercard քարտերի համար՝ բացառությամբ Mastercard Pension կենսաթոշակային քարտերի: Արդշինբանկի Mastercard քարտերը կարող եք պատվիրել՝ այցելելով Բանկի ցանկացած մասնաճյուղ:

Արդշինբանկը շարունակում է ամրապնդել իր դիրքը որպես առաջատար ֆինանսական հաստատություն՝ համադրելով նորարարական լուծումները, հաճախորդակենտրոնությունը եւ շուկայի զարգացմանն ուղղված ռազմավարական նախաձեռնությունները:

Բանկը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից: (Գ)

ԳՆԱՑՔՆԵՐ ԵՆ ԲԱԽՎԵԼ

Ինդոնեզիայի մայրաքաղաքում երկու գնացքների բախման հետեւանքով 14 մարդ է զոհվել, եւս 84-ը՝ վիրավորվել: Գնացքի որոշ ուղեւորների դեռեւս չի հաջողվում դուրս բերել: Որոնողափրկարարական աշխատանքները շարունակվում են: Ինդոնեզիայի նախագահը հանձնարարել է համապատասխան մարմիններին հետաքննել միջադեպի հանգամանքները:

● *Հ. Թումանյանի անվան ազգային տիկնիկային թատրոնում մայիսի 3-ին՝ ժամը 16:00-ին, կկայանա «Ոսկե ճուտիկը» ներկայացումը:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Արդյո՞ք հանրային պաշտոն զբաղեցնող անձը կարող է պաշտոնավարման ընթացքում անձամբ զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ կամ իրականացնել այլ աշխատանք:

Սուրեն Վարդանյան, 33 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց եւ հանրային ծառայողների համար սահմանված են պաշտոնին ներկայացվող որոշակի պահանջներ, որոնք թույլ են տալիս ապահովել պաշտոնական լիազորությունների՝ հավանական շահերի բախումից զերծ, արդյունավետ եւ անաչառ իրականացումը:

«Հանրային ծառայության մասին» օրենքի տեսանկյունից հանրային պաշտոն զբաղեցնող անձինք եւ հանրային ծառայողները չեն կարող զբաղեցնել իրենց կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման այլ մարմիններում, որեւէ պաշտոն՝ առեւտրային կազմակերպություններում, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, կրթական եւ ստեղծագործական աշխատանքից: Սույն օրենքով հստակեցվում են նաեւ ձեռնարկատիրական գործունեությունը, գիտական, կրթական, ստեղծագործական աշխատանքի հասկացությունները:

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ի դեպ, նշված պահանջների խախտումը նախատեսում է պատասխանատվության առավել խիստ միջոցը՝ պաշտոնական լիազորությունների դադարեցումը կամ զբաղեցրած պաշտոնից ազատումը:

Էջը՝ ՄԱՐԻԱՆՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ինչպե՞ս է Մարդու իրավունքների պաշտպանն աջակցում խախտված իրավունքի վերականգնման հարցում:

Կարեն Դանիելյան, 42 տարեկան



ՊԱՏԱՍԽԱՆ. Քննարկելով բողոքը եւ տեսնելով մարդու իրավունքների եւ ազատությունների խախտում՝ Պաշտպանն առաջարկում է տվյալ խախտումը կատարած պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնին կամ դրա պաշտոնատար անձին վերացնել թույլ տրված խախտումները:

Պաշտպանը նաեւ նշում է մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների վերականգնման համար անհրաժեշտ եւ կատարման ենթակա հնարավոր միջոցառումները:

Պաշտպանն իրավասու է առաջարկել իրավասու պետական մարմիններին՝ կարգապահական կամ վարչական տույժի ենթարկել կամ քրեական պատասխանատվության կանչել այն պաշտոնատար անձին, որի որոշումներով կամ գործողություններով (անգործությամբ) խախտվել են մարդու իրավունքները եւ հիմնարար ազատությունները, ինչպես նաեւ ձեռնարկել օրենքով նախատեսված այլ գործողություններ:

Մարդու իրավունքների պաշտպան

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ shamshyan.com-ի

Ողբերգական ավտովթար Սյունիքի մարզում. Peugeot-ն դուրս է եկել ճանապարհից եւ 100 մետր գլորվելով՝ հայտնվել ձորում: 1-ամյա երեխան, շտապօգնության մեջ գիտակցության չգալով, մահացել է:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+ 1 + 5 + 11 + 16
Կոտայքի լեռներ	+ 1 + 4 + 8 + 12
Կոտայքի նախալեռներ	+ 6 + 9 +12 + 15
Գեղարքունիք	0 + 4 + 8 + 12
Լոռի	+ 2 + 6 + 10 + 13
Տավուշ	+ 3 + 6 +11 + 13
Արագածոտնի լեռներ	0 + 4 + 7 + 10
Արագածոտնի նախալեռներ	+ 5 + 10 +12 + 16

Արարատ	+ 8 + 11 +14 + 17
Արմավիր	+ 9 + 12 +16 + 19
Վայոց ձորի լեռներ	0 + 3 + 7 + 10
Վայոց ձորի նախալեռներ	+ 9 + 13 +15 + 19
Սյունիքի լեռներ	- 1 + 3 + 4 + 7
Սյունիքի նախալեռներ	+ 3 + 6 + 8 + 12
Սյունիքի հովիտներ	+ 6 + 9 +12 + 15
Երեւան	+ 9 + 11 +15 + 17

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **28.04.2026**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*